

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՑՈՒՄ**

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2024թ.

սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 12:30-ին  
Ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ

հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2024թ. սեպտեմբերի 16-ին, ժամը՝ 17:00-ին  
ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին սեփականության  
իրավունքով պատկանող գույքերը

| Հ/Հ | Լոտի հերթական համարը | Գույքի (լոտի) անվանումը   | Գույքի (լոտի) գտնվելու վայրը        | Գնահատված արժեքը /ՀՀ դրամ/ | Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Նախավճարը /ՀՀ դրամ/ | Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/ |
|-----|----------------------|---|-------------------------------------|----------------------------|----------------------------|---------------------|-------------------------------|
| 1   | 1                    | Անխափան սնուցման սարքեր, 75 անվանում, որպես մեկ գույքային միավոր    | ք. Երևան, Կարապետ Ուլենցու փող., 68 | 527 000                    | 337 280                    | 16 864              | 8 882                         |
| 2   | 2                    | Պրոցեսորներ, Համակարգիչներ, 20 անվանում, որպես մեկ գույքային միավոր |                                     | 59 000                     | 37 760                     | 1 888               | 1 700                         |
| 3   | 3                    | Մոնիտոր, 30 անվանում, որպես մեկ գույքային միավոր                    |                                     | 30 700                     | 19 648                     | 983                 | 1 000                         |
| 4   | 4                    | Դյուրակիր համակարգիչներ, 7 անվանում, որպես մեկ գույքային միավոր     |                                     | 54 000                     | 34 560                     | 1 728               | 1 700                         |
| 5   | 5                    | Պատճենահանող սարքեր, 2 անվանում, որպես մեկ գույքային միավոր         |                                     | 14 000                     | 8 960                      | 448                 | 500                           |
| 6   | 6                    | Տպիչներ, 10 անվանում, որպես մեկ գույքային միավոր                    |                                     | 48 100                     | 30 784                     | 1 540               | 1 700                         |
| 7   | 7                    | Ռիզոգրաֆ Ricoh Priort HQ6999  |                                     | 80 000                     | 51 200                     | 2 560               | 1 730                         |
| 8   | 8                    | Տպիչ Color HP Laserjet 2600n  |                                     | 5 000                      | 3 200                      | 160                 | 500                           |
| 9   | 9                    | Սկաներներ, 5 անվանում, որպես մեկ գույքային միավոր                   |                                     | 54 000                     | 34 560                     | 1 728               | 1 700                         |
| 10  | 10                   | CD փոխարկիչ /CD changer/ R-Quest copy pro powerpro III              |                                     | 12 000                     | 7 680                      | 384                 | 500                           |
| 11  | 11                   | Պրոյեկտորներ, 4 անվանում, որպես մեկ գույքային միավոր                |                                     | 12 000                     | 7 680                      | 384                 | 500                           |
| 12  | 12                   | Ցանցային սվիչ, 4 անվանում, որպես մեկ գույքային միավոր               |                                     | 300                        | 192                        | 10                  | 500                           |
| 13  | 13                   | Memory For Canon iR-2020  |                                     | 5 000                      | 3 200                      | 160                 | 500                           |
| 14  | 14                   | Աթոռներ, 10 անվանում/37 հատ/, որպես մեկ գույքային միավոր            |                                     | 7 400                      | 4 736                      | 237                 | 500                           |
| 15  | 15                   | Հակազազեր, 50 հատ   |                                     | 40 000                     | 25 600                     | 1 280               | 1 700                         |
| 16  | 16                   | Շերտավարագույրներ /5.6զմ/, 16 հատ                                   |                                     | 1 600                      | 1 024                      | 52                  | 500                           |
| 17  | 17                   | Վարագույրի ձող (կառնիզ 5.6 զմ), 16 հատ                              |                                     | 8 000                      | 5 120                      | 256                 | 500                           |
| 18  | 18                   | Համակարգիչներ, 9 անվանում, որպես մեկ գույքային միավոր               |                                     | 25 000                     | 16 000                     | 800                 | 1 000                         |
| 19  | 19                   | Բազմացման սարք DVD «Կատյուշա»                                       |                                     | 8 000                      | 5 120                      | 256                 | 500                           |
| 20  | 20                   | Տպիչներ, 5 անվանում, որպես մեկ գույքային միավոր                     |                                     | 17 000                     | 10 880                     | 544                 | 1 000                         |
| 21  | 21                   | Մոնիտորներ, 6 անվանում, որպես մեկ գույքային միավոր                  |                                     | 6 000                      | 3 840                      | 192                 | 500                           |
| 22  | 22                   | Համակարգիչներ, 10 անվանում, որպես մեկ գույքային միավոր              |                                     | 29 000                     | 18 560                     | 928                 | 1 000                         |

\* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

\* Աճուրդի մասնակցից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուտք են նախավճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս):

\* Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

\* Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:

• Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցողները լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Կարապետ Ուլենցու փող., 68 շենք հասցեում, 3-րդ հարկ/308 սենյակ/, զանգահարելով Մարիամ Խաչատրյանին՝ (098) 18-80-28, (044) 20-83-55 հեռախոսահամարներով, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-17:00: Կազմակերպիչը պարտավորված է չլինի աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակցից՝ «ստեղծել համաձայնել է»:

**Աճուրդի մասնակցության պայմանները՝**

- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել **անհրաժեշտ փաստաթղթեր**:

**Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝**

- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ **անձնագրի պատճենը**:

- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը և **կանոնադրությունը**,

- Նախավճարի վճարումը հաստատվող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրված լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուրաբազման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը: **Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:**

- Մասնակցության վճարումը հաստատվող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրված լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի**

**անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝

ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակով՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտավորելի նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լուրի հերթական համարը:

**Մասնակցության վճարը գույքի (լուրի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:**

- Հայտարարուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

\* **Վերջի նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս):**

**Աճուրդի մասնակցի չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝**

- **Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:**

- Վճարումը հաստատվող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակցները և մասնակցի չհամարվող անձինք աճուրդի անցկացման դաիվիճում զբաղեցնում են առանձին նստավայրեր:

- **Աճուրդի մասնակցները և մասնակցի չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

**Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝**

- Աճուրդի մասնակցների անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի առկայությունը պարտավոր է, լիազորված անձի դեպքում՝ նաև

**լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը:

Ցանկացած մասնակցի իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակցից, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակցի:

- Եթե մի քանի մասնակցի միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- Լուրի (լուրերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակցից ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

**Լուրի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝**

- Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնամասերիկի չափը չզերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած 10 **օրվա** ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

- **Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:**

- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակցներին:

\* **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32, 043-06-07-16**

**հեռախոսահամարներով:**

**Ծանուցում.**

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի

մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

**Քրեական օրենսգրքի 283 հոդված.**

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտին, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատությունների կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոչոր չափերի գույքային վնաս պատճառելով՝ պատժվում է քրեականքով՝ փաստապարհիկից երեսնամասերիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ փոփոխությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝  
1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ  
2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝  
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

\***Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսածայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**